ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«02» 02 2024թ.
№ ՊԵՍՊ-գԿՀ-Ֆ2

«Սյուն Գրուպ» ՍՊԸ (02294595)
Ք. Երևան, Արտաշիսյան 79/2
հեռ. 077999070
էլ. փոստի հասցե՝ info@syun.am

ՀՀ պաշտպանության նախարարության և «Սյուն Գրուպ» ՍՊ ընկերության միջև 10.02.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-9/5-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և 21.04.2023թ. պայմանագրին կից կնքված համաձայանգրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում «Սյուն Գրուպ» ՍՊ ընկերությունը 2023թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 50 հատ «Հեմոստատիկ սպունգ ներծծվող 5x7,5սմ», որ չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2024թ. փետրվարի 2-ին** միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Սյուն Գրուպ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **11** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), **2** ՀՀ դրամ տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) **տույժը հաշվարկված է մինչև 25.12.2023թ.:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **34 500** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **51 750** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2024թ. փետրվարի 12-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **34 500** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **51 750** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Սյուն Գրուպ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2024թ. փետրվարի 12-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2076 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ